ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

№ 141/2 Ս. Էջմիածին, 17 Mars 1958

Այսօր մեծ աւետիս կուտանք Ձեզ Մեր Տիրոջ եւ Փրկչի Իսկական Սուրբ Տաճարէն՝

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Այս սուրբ ուրախութեամբ ոգեշնչուած, Մեր Հայրապետական ողջոյնը եւ օրհնութիւնը կը բերեմք Սուրբ Աթոռիդ Միաբանութեան եւ հաւայն Մեր հաւատացեալ եւ սիրելի ժողովուրդին, սրտաբուխ մաղթանքներով որ յարուցեալ Փրկչի սէրն ու խաղաղութիւնը իջնեն ու հաստատուին Ձեր բոլորիդ սրտերուն մէջ՝ ի շինութիւն մեր սրբազնասուրբ Եկեղեցիին, ի միաբանութիւն ազգիս բոլոր զաւակներուն անխտիր եւ ի մխիթարութիւն հաւատքի վեմ Մայր Աթոռիս:

Հրատապառ Յարութեան շնորհները Ձեզ բոլորիդ համար բոլոր հանդիսանաց ապրիւր բաջառողջութեան հոգւոյ եւ մարմնոյ, եւ առաջնորդ ոգի Ձեր ապրումներուն, Ձեր խոհերուն եւ ձեռաց գործերուն:

«Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց» (Ա. Պետրոս, 1, 3):

Արդ, ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան: Եւ սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ Ձեզ ամենեսին որ է ի Քրիստոս Յիսուս. ամէն:

Օրհնութեամբ՝

ՎԱԶԳԷՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿՆԻՔ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԽՈՐԻՇԱՀ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ծանօթ: *Ամսագրիս այս թիւի առաջին պրակը տպագրուած էր արդէն երբ ստացուեցաւ Հայրապետական Աթոռոյ պաշտօնաթերթ Էջմ-ածնի Դեկտեմբեր 1957ի թիւը։ Անոր մէջ, Մայր Աթոռոյ երիտասարդ և շնորհալի Միաբաններէն Տ. Տիրայր Վրդ. Մարտիկեան շահեկան յօդուած մը ունի Լեռնային Ղարաբաղի կարգ մը վանքերու մասին։ Գանձասար պատմական վանքի մասին գրած ատեն յօդուածագիրը մէջ կը բերէ եկեղեցւոյ գլխաւոր և ընդարձակ արձանագրութիւնը որ սերտօրէն կապ ունի Ամսագրիս 91րդ էջին վրայ երևցած «Վկայութիւն» փոքրիկ կտորին հետ։ Այդ արձանագրութենէն յառաջ կը բերենք Խորիշահ իշխանուհիի Երուսաղէմ ուխտի գալուն վերաբերեալ մասը։ «Վկայութիւն» հատուածիկի վերջընթեր տողի ՈՉ հայկական թուականը պէտք է ըլլայ ՈՁ։* ԽՄԲ.

«Ցանուն Սուրբ Երրորդութեան Հաւր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն այս գիր արձանի է, զոր ես նուաստ ծառայ Աստուծոյ Զալալ Դաւլա Հասան որդի Վախտանգայ՝ թոռն մեծին Հասանայ՝ ընակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր և ի յոգնաստահման նահանգի։ Զհայրն իմ ի վախճան կենաց ելից իւր աստեացս անդարձ կտակի հաստատեաց ինձ և մաւր իմոյ Խորիշահի՝ որ էր դուստր իշխանաց իշխանին Սարգսի։ Զի չինեսցուք զեկեղեցիս ի զերեզմանատուն հարց մերոց ի Գանձասար, զոր սկսեալ մեր իր ՈԿԵ թուին Հայոց աւգնականութեամբ բարերարին Աստուծոյ։ Եւ ի խփել Լուսամատին Արեւելից մուտքն իմ կրկինաւորեալ, Զոգաւի ցերուսաղէմ երկրորդ անգամ, Անդէն ի դրան ցերութեան խարազնազգեաց ձգնութեամբ, բազմամեայ ժուժկալութեամբ հանդեալի ի քրիստոս Լուսոց վկայութեամբ եւ Անդէն պաշտեցաւ»:

(Գլխագրումները մեր են: ԽՄԲ.)

digitised by A.R.A.R.@